

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԹԻՎ ԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՍՏԱՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ ՄԱՅՐ ԱԹՈՌՈ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՎՈ

ԷՋՄԻԱԾԻՆ

Երեկ, նոյեմբերի 28-ին, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո Հյուսիսային Ամերիկայի հայոց թեմական պատգամավորական ժողովը գումարվեցավ Ս. Խաչ եկեղեցվո մեջ (Յունիրն Սիտի, Նյուզրեյ): 99 պատգամավորներու մասնակցությամբ, ընտրելիներու եռապատիկ ցանկին վրա կատարված ընտրությամբ, քվեից մեծամասնությամբ ընտրվեցավ և ապա եղած առաջարկը գործադրվելով՝ միաձայնությամբ թեմական առաջնորդ ընդունվեցավ գերապատիվ Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը: Դիվանս ուրախությամբ Գերագույն Հոգևոր Խորհուրդին կհայտնե այս ընտրության արդյունքը և կխնդրե փութացնել Մամբրե սրբազանի այս նոր պաշտոնի վավերացումը:

Հյուսիսային Ամերիկայի հայոց
թեմական պատգամավորական ժողովի
առաջին ատենապետ՝ ՏԱՏՈՒՐ ՏԱՏՈՒՐՅԱՆ
առաջին ատենագրիր՝ ՊԵՏՐՈՍ ՊՈՆՏԱՑԻ

ՊԱՐՈՆԱՅՔ ՏԱՏՈՒՐ ՏԱՏՈՒՐՅԱՆԻՆ ԵՎ ՊԵՏՐՈՍ ՊՈՆՏԱՑՈՒՆ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ, ՆՅՈՒ-ՅՈՐՔ

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, ինքնության առնելով Հյուսիսային Ամերիկայի հայոց առաջնորդի ընտրության արդյունքը, գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանին հաստատեց թեմի հայոց առաջնորդ:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ